ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE9B-833A-41C3-89F9 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/6524/02/24 ք. Երևան
13 Նոյեմբերի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ.Գրիգորյանս(այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով թիվ ԵԴ2/6524/02/24 քաղաքացիական գործը,

ՊԱՐԶԵՑ

Դատարանի (դատավոր՝ Ս. Երիցյանի) վարույթում է գտնվել քաղաքացիական գործն ըստ հայցի Սասուն Ղուլունց Արամայիսի ԱՁ-ի ընդդեմ «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ» ՀՄԴ-ի, երրորդ անձ՝ «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի՝ ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի գործողությունը՝ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/61 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի գումարը վճարելու պահանջն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու պահանջի մասին, ինչը 21.10.2024թ. վճռով մերժվել է։

Հիշյալ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 09.06.2025թ. որոշում է կայացրել հիշյալ վճիռը բեկանելու և գործը նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու մասին:

Հիշյալ քաղաքացիական գործը մակագրվել և էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 11.11.2025թ.:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե սույն գլխով առանձնահատկություններ սահմանված չեն, ապա Համակարգի միջոցով իրականացվող գործողությունների վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանում գործի քննությունը, իսկ վերաքննիչ դատարանում բողոքի քննությունն անցկացվում են դատարանի անփոփոխ կազմով, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Դատարանի կազմը փոխվելու կամ կազմում փոփոխության դեպքում կայացվում է գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու մասին որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5.1րդ մասի համաձայն՝ դատարանի կազմը փոխվելու կամ դատական կազմում փոփոխության դեպքում գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը որոշում է կայացնում գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն սկզբից սկսելու կամ գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու մասին, բացառությամբ առաջին ատյանի դատարանում գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքերի:

Գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքում առաջին ատյանի դատարանը գործը վարույթ ընդունելու հետ միաժամանակ որոշում է կայացնում գործի քննությունն սկզբից սկսելու կամ գործը դատաքննության փուլից վերսկսելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում դատարանը գործն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պետք է ընդունել վարույթ:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 188-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

Սասուն Ղուլունց Արամայիսի ԱՁ-ի ընդդեմ «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ» ՀՄԴ-ի, երրորդ անձ՝ «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի՝ ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի գործողությունը՝ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/61 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի գումարը վճարելու պահանջն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու պահանջի մասին, քաղաքացիական գործն ընդունել վարույթը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝
Տիգրան Գրիգորյան

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2025.11.13 10:15:36 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am